**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ` ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈ-ՎԻ ՄԻՋԵՎ «ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ` ՄԱՍ II» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը` կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի փետրվարի 7-ին` Բրյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում ստորագրված` Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի` Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ` ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր

բացառությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ՝ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրի եւ Ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում հավելվածները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ստորագրել համաձայնագրի իրականացումն ապահովող պայմանագրեր՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում, ընդ որում, այդ վերջնաժամկետը չի կարող երկարացվել,
- թույլատրել Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարադրամի ներմուծումն ու գնումը, ինչպես նաեւ մրցույթին մասնակցող բոլոր կապալառուների նկատմամբ առանց խտրականության կիրառել տարադրամի փոխանակման ներքին կանոնները,
- տրամադրել համաֆինանսավորում Եվրոպական համայնքների կողմից չֆինանսավորվող հարկերի, տուրքերի կամ այլ վճարումների համար, բացառությամբ հատուկ պայմաններով նախատեսված դեպքերի (ներառյալ ԱԱՀ կամ համարժեք հարկեր),
- կիրառել Եվրոպական համայնքների կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհների նկատմամբ ամենանպաստավոր հարկային եւ մաքսային պայմաններ՝ կիրառելի այլ պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ:

4. Համաձայնագրում ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանված վերջին Կողմի ստորագրման օրը, սակայն Հայաստանի Հանրապետության կողմից համաձայնագիրը ստորագրվել է վերապահումով՝ առ այն, որ Հայաստանի Հանրապետության համար համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերի ավարտի մասին ծանուցումը Եվրոպական հանձնաժողովի կողմից ստանալու օրը:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 եւ 48 հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 նոյեմբերի 2008 թվականի
ՍԴՈ-778